

2022 թվականի Կոռուպցիայի ընկալման համաթիվն Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ցույց է տալիս, թե ինչպես է կոռուպցիան խթանում դաժան հակամարտությունը

Աշխարհի երկրորդ ամենակոռումպացված տարածաշրջանը ցույց է տալիս հետագա անկման նշաններ

Բեռլին, 31 հունվարի, 2022թ. - Այսօր Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից հրապարակված Կոռուպցիայի ընկալման 2022թ. համաթիվը ցույց է տալիս, որ կոռուպցիան շարունակում է մոլեգնել Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում, ընդ որում տարածաշրջանի շատ երկրների համաթվերի արժեքները գրանցեցին իրենց պատմական նվազագույնը:

Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա ցնցեց աշխարհը 2022 թվականին, իսկ համաձայն Global Peace Index-ի՝ խաղաղությունը Եվրասիական տարածաշրջանում նվազեց ավելի շատ, քան աշխարհի որևէ այլ տարածաշրջանում: Ողջ տարածաշրջանում իշխանության բարձր մակարդակում կոռուպցիան առաջացնում է քաղաքական անկայունություն, թուլացնում է ինստիտուտները, ավելի տարածված է դարձնում կազմակերպված հանցավորությունը և նույնիսկ հրահրում է դաժան հակամարտություն:

Ինչպես նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային խորհրդական Ալթինայ Միրզաբեկովան. «Անցնող տարում միջազգային հանրությունն ականատես եղավ որևէ ձևով չգսպվող կոռուպցիայի և կլեպտոկրատիայի առավել վայրագ հետևանքին: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայիի առաջնորդների համար եկել է սթափվելու ժամանակը՝ վերջապես ստանձնելու համատարած կոռուպցիայի դեմ պայքարը և աջակցելու ժողովրդավարությանը, կայունությանը և մարդու հիմնարար իրավունքներին տարածաշրջանի բոլոր ժողովուրդների համար»:

Կոռուպցիայի ընդհանուր իրավիճակը Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում 2022 թվականին

ԿԸՀ 2022թ. դասակարգումն ընդգրկում է 180 պետություն և տարածք՝ ըստ հանրային ոլորտում 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակով չափված կոռուպցիայի մակարդակների նրանց ընկալման:

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի ԿԸՀ միջին արժեքը 2022թ.-ին նվազել է մեկ միավորով և հավասարվել է 35-ի:

- **Վրաստանը** (56 միավոր), **Չայաստանը** (46 միավոր) և **Չեռնոգորիան** (45 միավոր) առաջատարներն են և տարածաշրջանի միակ երկրները, որոնց համաթվերի արժեքները բարձր են համաշխարհային միջինից, որը հավասար է 43-ի:
- Տարածաշրջանի հետնապահներն են **Թուրքմենստանը** (19 միավոր), **Ադրբեջանը** (23 միավոր) և **Տաջիկստանը** (24 միավոր):
- **Սերբիայի** (36 միավոր), **Թուրքիայի** (36 միավոր), **Բոսնիա և Հերցեգովինայի** (34 միավոր) և **Ադրբեջանի** (23 միավոր) ԿԸՀ արժեքները 2022թ.-ին իրենց պատմական նվազագույններն են:
- 2017թ. համեմատ իրենց ԿԸՀ արժեքները նշանակալիորեն բարելավել են **Չայաստանը** (46 միավոր), **Սուդոլան** (39 միավոր) և **Ուզբեկստանը** (31 միավոր):

Յուրաքանչյուր պետության ԿԸՀ անհատական միավորի և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների, ինչպես նաև յուրաքանչյուր տարածաշրջանի վերլուծության վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս տարածաշրջանի **2022 ԿԸՀ Էջ** հղումը:

Կոռուպցիան, հակամարտությունը և անվտանգությունը

Կոռուպցիայի դեմ պայքարում տարիների անգործությունը թույլ տվեց կլեպտոկրատներին հաստատելու իրենց վերահսկողությունը, խաթարելու ժողովրդավարական գործընթացները, սահմանափակելու քաղաքացիական հասարակության տարածքը և թուլացնելու հանրային կառույցները՝ բորբոքելով բռնություն, հակամարտություններ և անկայունություն Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում:

- 2022թ. փետրվարին սկսված Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինա հանդիսանում է խիստ հիշեցում առ այն, որ կոռուպցիան և իշխանությունների

կողմից հաշվետվողականության բացակայությունը ծնում են սպառնալիքներ միջազգային խաղաղությանը և անվտանգությանը. **Ռուսաստանի** (28 միավոր) կլետատկրատները դիզել են մեծ հարստություն՝ խոստանալով իրենց հավատարմությունը նախագահ Պուտինին և դրա դիմաց պետությունից ստանալով շահավետ պայմանագրեր և իրենց տնտեսական շահերի պաշտպանություն : Պուտինի իշխանության վրա զսպումների կատարյալ բացակայությունը թույլ տվեց նրան անպատիժ կերպով հետամուտ լինել իր աշխարհաքաղաքական նկրտումներին: Այս ներխուժումն ապակայունացրեց եվրոպական աշխարհամասը՝ սպառնալով ժողովրդավարությանը և սպանելով տասնյակ հազարավոր մարդկանց:

- **Ղազախստանում** (36 միավոր) անարդարության և կոռուպցիայի դեմ, մանավանդ կապված նրա նախկին իշխող ընտանիքի ենթադրաբար ապօրինի ճանապարհով ձեռք բերված հարստության հետ, երկար ժամանակ եռացող դժգոհությունը պայթեց 2022թ. հունվարին: Վառելիքի գների թռիչքածև աճը դուրս բերեց մարդկանց փողոցները բողոքի ցույցերի, որոնք ի վերջո վերածեցին անկարգությունների: Ավելի քան 200 մարդ սպանվեց և անվտանգության ուժերին մեղադրեցին իրենց կողմից ձերբակալված վիրավոր ցուցարարներին խոշտանգելու մեջ:
- Արևմտյան Բալկանների պետությունները շարունակում են պայքարել կազմակերպված հանցավորության դեմ իրենց սակավ միջոցներ ունեցող կառույցների միջոցով, որոնք չունեն բավարար կարողություններ կամ անկախություն՝ լուծելու համար այդ հիմնահարցը, մասամբ նաև կոռուպցիայի պատճառով: **Սերբիայի** (36 միավոր) և **Բոսնիա և Հերցեգովինայի** (34 միավոր) ԿԸՀ արժեքները 2022թ. հասան իրենց պատմական նվազագույն ցուցանիշներին՝ օրենքի գերակայության համար և զավթված դատական համակարգի դեմ պայքարում: Բոսնիա և Հերցեգովինայում կոռուպցիոն սկանդալների շարքը, պաշտոնանկությունները և նոր գլխավոր դատախազի նշանակման խիստ թերի ընթացակարգն արատավորեցին դատախազական գլխավոր հաստատությունը: Սերբիայում քաղաքական դերակատարներն ունեն եական ազդեցություն դատական համակարգի վրա, որը տապալեց կազմակերպված հանցավորության հետ կապված մի քանի կարևոր գործեր, ներառյալ նրանք, որոնցում, ենթադրաբար ներքաշված էին բարձրաստիճան պաշտոնյաներ:
- Նախքան ռուսական ներխուժումը, չնայած **Ուկրաինայի** (33 միավոր) ԿԸՀ համաթվի արժեքը մնում էր ցածր, նա անցկացնում էր կարևոր հակակոռուպցիոն բարեփոխումներ և այդ արժեքն անշեղորեն բարելավում էր: Նույնիսկ պատերազմը սկսվելուց հետո պետությունը շարունակում էր առաջնահերթություն համարել հակակոռուպցիոն բարեփոխումները և անցյալ տարի հունիսին ընդունեց երկրի նոր Հակակոռուպցիոն ռազմավարությունը:

Սակայն, պատերազմը խաթարեց բարեփոխումների բնականոն ընթացքը և մեծացրեց կոռուպցիոն ռիսկերը՝ թույլ տալով կոռումպացված դերակատարներին գրպանել վերականգնման համար նախատեսված գումարները, երբ այս տարվա հունվարի կեսերին հետաքննությունը բացահայտեց պատերազմական վիճակից շահավետ օգտվելու դեպքեր պաշտպանության նախարարության կամ համայնքների և տարածաշրջանների զարգացման նախարարության կողմից: Այս սկանդալն ընդգծում է բարեփոխումների անհրաժեշտությունը՝ կանխարգելելու համար այսպիսի խախտումներն ապագայում, սակայն արժեքավոր է այն, որ երկրի հակակոռուպցիոն մեխանիզմները մինչ այժմ էլ թույլ են տալիս պատասխանատվության ենթարկել պետական պաշտոնյաներին:

Թրանսփարենսի Ինթերնեշնլը կոչ է անում կառավարություններին առաջնահերթ դարձնել հակակոռուպցիոն պարտավորությունները, ուժեղացնել հակակշիռները, պաշտպանել տեղեկատվության իրավունքը և սահմանափակել մասնավոր շահերի ազդեցությունը՝ աշխարհը կոռուպցիայից և դրանից առաջ եկող բռնությունից վերջնականապես ազատելու համար:

Ինչպես նշում է Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն Դանիել Էրիկսոնը. «Լավ լուրն այն է, որ առաջնորդները կարող են միաժամանակ պայքարել կոռուպցիայի դեմ և նպաստել խաղաղությանը: Կառավարությունները պետք է ավելի բաց լինեն, ներառելու որոշումների կայացման մեջ հանրությանը, սկսած ակտիվիստներից և գործարարներից մինչև մարզինալացված խմբերը և երիտասարդներին: Ժողովրդավարական հասարակություններում մարդիկ կարող են բարձրացնել իրենց ձայները՝ արմատախիլ անելու համար կոռուպցիան և պահանջելու ավելի ապահով աշխարհ բոլորիս համար:»

Ծանոթագրություն

- Մեդիա էջը (տե՛ս <https://www.transparency.org/en/cpi/2022/media-kit>) ներառում է ԿԸՀ 2022-ի զեկույցը հինգ լեզուներով, ինչպես նաև տվյալների ամբողջական բազան, մեթոդաբանությունը, մամլո միջազգային հաղորդագրությունն անգլերեն և ռուսերեն լեզուներով և լրացուցիչ վերլուծություն Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վերաբերյալ:

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995թ. իր առաջին հրապարակումից Կոռուպցիայի ընկալման համաթիվը, դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: 2021 թվականի համաթիվը գնահատել է աշխարհի 180 երկրները և տարածքները՝ ելնելով հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումից և օգտագործելով տվյալներ 13 արտաքին աղբյուրներից, որոնց թվում Չամաշխարհային Բանկը, Չամաշխարհային տնտեսական ֆորումը, ռիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունները, հետազոտական կենտրոնները և այլն: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները:

ԿԸՀ-ի հաշվարկման գործընթացը կանոնավոր կերպով վերանայվում է (վերջին անգամ՝ 2017 թվականին Եվրոպական Չանձնաժողովի Չամատեղ հետազոտական կենտրոնի կողմից)՝ համոզվելու համար, որ այն ունի հնարավորինս կուռ և համահունչ ներքին տրամաբանություն: 2012 թվականից այս կողմ ԿԸՀ յուրաքանչյուր տարվա գնահատականները համեմատելի են յուրաքանչյուր այլ տարվա գնահատականների հետ: Ավելի շատ տեղեկատվության համար՝ տե՛ս *ԿԸՀ այբուբենը. ինչպես է հաշվարկվում Կոռուպցիայի ընկալման համաթիվը* հոդվածը (<https://www.transparency.org/en/news/how-cpi-scores-are-calculated>):